ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«30» հունիսի 2025թ. ԱՊՀՀՊ-934

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ -ին
(ՀՎՀՀ՝ 00179816)
Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ. 10շ. Բն 58
հեռ. +374-43-38-06-10

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/29» ծածկագրով գնանշման հարցման 1-5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01336677) և կնքվել էր Պայմանագիր 29.10.2024-ին, որի ֆինանսական միջոցների տրամադրման վերաբերյալ Համաձայնագիրը կնքվել էր 16.01.2025թ-ին և կատարման ժամկետ էր սահմանված 15.04.2025թ-ը: 05.05.2025թ-ին ապրանքը մատակարարվել է սակայն ըստ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի սարքերը պետք է ունենային տրամաչափարկման սերտիֆիկատ, որը բացակայել է, որի վերաբերյալ տրվել էր բացասական եզրակացություն և 10 օրյա ժամկետ՝ ապրանքը նորով փոխարինելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, 6.3 կետի համաձայն գանձվում է տուգանք պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները սահմանված կարգով անհրաժեշտ է վճարել Պայմանագրում նշված հաշվեհամարներին:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, եթե մինչև 2025թ. հուլիսի 07-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գումարները, ապա կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.ԲԱԲԱՅԱՆ

Կատարող՝ Ա.Ներսիսյան
Հեռ.՝010 232600 (137)